

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	
20 ԹԻՐԻ ԽԱՄԱՐ	
Վառնա	Քր. 1,50
Վառնայէն գուրս	2
Վրոտաւահան	2,50

ԿԱՏԱԿ

Գրութիւնք եւ չեն զրկուիր :
Նամակ գրամ եւոյն զրկել հե-
տեւեալ հասցէին ,
ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ԿԱՏԱԿ Ի
Վառնա (Պուլհարիա) :

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на списанието

„ГАДАГЪ“
ВАРНА (България),

Administration du journal

« GADAG »
VARNA, (Bulgarie).

Հատը 7 1/2 Սանթիմ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

«Կատակ»ի վարչական ամեն հսկողու-
թիւն և կառավարութիւն այս օրէն կը
յանձնենք Տիար Յ. Զարբեանի : Հետե-
ւաբար յետ այսօրիկ իրեն հետ պէտք է
ըլլան թերթին վերաբերեալ ամեն յա-
րաբերութիւնք :

S. ձ.

Ս. ՖԷԼԷԿԵԱՆ

Բաղմութիւ համակրողաց բաղձանքնե-
րուն համաձայն , մտա ժամանակի մէջ
«Կատակ»ի ծառար մեծնալով , անունն
ալ տարբեր ըլլալը կը ծանուցանեմք
մեր յարգելի ընթերցողաց :

նար առնել , ըլլայ նիւթական , ըլլայ
բարոյական :

Աշխարհ արարատ գիտէ որ Զարբեան
իւր պապենական բոլոր միջոց ու կարո-
ղութիւն տուած է իւր սիրական աղգին
համար և իւր համակրող բարեկամաց ա-
ջակցութիւնն իսկ չէ խնայած առ այն ,
ու այսօր ալ բան չունի , սակայն ունի
տակաւին բան մը , որն որ պակասած չէ
իրեն — սէր առ սիրական ժողովուրդ ,
սէր առ իւր պաշտելի հայրենիք — : Կու-
տամ և պարտաւոր եմ տալու այն ամենը
ինչ որ կրնամ տալ , իսկ կը կարծեմ
թէ անկէ աւելին ոչ որ պահանջելու ի-
րաւունք ունի :

Յ. ԶԱՐԲԵԱՆ

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

Ինչպէս վերողրեալ ազդարարութենէն
կը հասկցուի , յետ այսօրիկ «Կատակ»ի
վարչական մասը յանձնուած է մեզ , կը
յուսամ թէ պիտի կրնամ գոհացում տալ
մեր պաշտաւարման համակրողաց , իրենց
թերթը իրենց հասցենքու , պայմանաւ որ ,
իրենք ալ իրենց աջակցութիւնը բարե-
հաճին հասցնել մեզ , որքան կարելի է ա-
րագ ու շուտ :

Ամէն բան բաց չի խօսուիր , պարտա-
կանութիւն ըստածը երկու կողմանէ
կ'ըլլայ , ունի որ առնեն , ասոր կ'ըսեն
ԱՅՈՒՆ ՏՈՒՐ :

Ի հարկէ չեմ կրնար ալ երբ չեմ կրն-

ԲԱՑ ՆԱՄՍԿ

ԽՈՒՂԵՐՈՒՆ

Արեւու տակ պտտող Հայ մը չը մնաց ,
որ միութեան պէտքը չ'զգայ , բացի ութ
տասը հատ կեդրոնի անդամներէ և դը-
լիաւոր ներկայացուցիչներէ : Երբ բացա-
ռութիւն կազմող այս ութ տաս ան-
հատներ այսօր միանալու ջանքեր կրնեն
և իրարու պայմաններ կառավարկեն ,
պատճառն այն է որ այլապէս իրենց մօ-
տաւոր և ահազնադղորդ անկումը դու-
շակած են , եկուր անս որ միեւնոյն ա-
տեն ալ ժողովուրդին աչքին քօզ փչե-

ղովաւորդ, կարող էնք տշխարհին ցոյց տալ մեր « յեզափոխականների » ազգային սպաննութիւնները : Երեւում է այդպէս է պահաջում Հայոց Մեծեռացիան : Բայց ի՞նչու էին ուզում սպաննել Օտեանին : Հարցուցէք ամեն մի վանեցուն ո՞վ է Գ. Օտեան : Նա ձեզ կը պատասխանէ, թէ Օտեանը վանի հայրենասէրներից առաջիններից մէկն էր, որ աքսորուեցաւ և մի քանի տարիներ տաճկական աքսորի հրաշալիքներ տեսներուց յետոյ վերջապէս վերադարձաւ իր հայրենիքը և հռչակաւոր, դաշնակցութեան անաքեկիյններին անմահացնող Պահրի փաշայի օրերով նորից բանտարկուեցաւ և արդէն շատ վաղուց կախաղան բարձրացած կը լինէր եթէ չը յաջողուէր փախչիլ բանտից և զանազան դժոխային տանջանքներից յետոյ իրեն ձգել Պարսկաստան : Այս ճիշդ այն ժամանակներ երբ նոյն « հռչակաւոր Հ. Յ. դաշնակցութեան զանազան մեծ սօցիալ-դիմոկրատներ » նստած Սարմատում « ուսէին ըմպէին » և . . . հարցուցէք Սարմատեցուն և նա ձեզ կ'ատէ էլ ինչ :

Բայց դառնանք Օտեանին : Սարմատ դալով նա մեր յեզափոխականների նման պարապ չը նստեց և ի՛նչ անել չսկսեց, այլ իսկոյն ուսուցիչ եղաւ Համբարումի դիւլում : Նա դարձրեց իրաւոր Պարսկաստանի մի խաւ անկիւնում ընկած դպրոցը աւելի բարեկարգ և բառաջարկէմք թէ նոյն իսկ անպայման աւելի քաղաքակրթութեամբ Պուլղարիայի Ռուս. ճուր. քաղաքի հայոց դպրոցը, իւր 7-8 ընկերավարական, սօցիալ-դիմոկրատ և այլն և այլն ուսուցչուհիներով և ուսուցիչներով :

Ինչո՞ւ էին ուզում սպաննել այս մարդուն : Թող տան : Ժամանակ է հաշիւ առալու : Թէեւ այս առաջին չէ, նորա

չատ ունին այդպիսի հրաշքներ կատարած : Մօտիկ անցեալում շատ այդպիսի դործեր կան ծածկուած . . . մի օր լոյս տշխարհ կը դան : Ժողովուրդն էլ այնքան մեռացկոտ չը լինիր :

Ահա « Կատակ » ի միջոցաւ հրաւիրում եմ Հ. Յ. դաշնակցութեան բիւրօյին տսել հրապարակաւ, ինչո՞ւ կատարուեցան անցեալի շատ սպաննութիւններ և այժմ ինչո՞ւ ուզում էին սպաննել Արսէն Յակոբեանին (Գ. Օտեան) :

Ճշմարիտ է, նա այնքան « մեծ հերոս չէ » ինչպէս զանազան նիկոյներ, ոսկաններ, ջէլլադներ, վահան վարազներ և այլն և այլն . . . բայց ի՞նչ անենք, չէ որ մեր ժողովուրդը բարեբաղդաբար միայն այդ իրենց ի՛նչ քաջով « անձնազոհներից » չէ կաղմուած : Երեւում է Հ. Յ. դաշնակցութեան նպատակն է սպաննել բոլոր նոցա, որոնք իրենց համակարծիք չեն :

Ժողովուրդ, եթէ կ'ուզես ապրիլ, եթէ չես ուզեր քեզ էլ տեղի ենթարկել սատկ տուր, տուր, ինձ լսի՛ր . . . :

Ի. Բ. Ս.

Միւլթէպէր կաղէթածի աղբէր,

« Կտակ » կաղէթածի ակազօր շատ պարեւ ի խորոց սրտէ ամէն .

Յայտ լիցի ձեր սիրելութեան որ ես էտա բարեք՝ խաղա՛ր էրկու խարիր ֆը՛ն, վեց խարիր իմը՛ն . կինա վեց խարիր աը՛ն, երեք խաղա՛ր սթը՛ն, խաղա՛ր խինկ խարիր լը՛ն, խաղա՛ր խինկ խարիր էլ քը՛ն և վեց խարիր զը՛ն իմ անծիս միսն ուտելով, ստաց կաշին սրօրելով, կիշեր ցիւրեկ աըին կրտինկ թափելով կըցի շինել և սըպուլթինի կուործին խամար խաղըր անել : Մըկայ էտա փարէն՝ աիւրթաւ

զա կազէթածի էք, տօղրի մարդ էք տէյի, վստախ էլա ձեր ձեռ էօրէխ կեցի որ ամենայն խաւստով մեր կօ միթածի պաշի ճոշ ափանտիքտէրանց ձեռն խասցընիք և իւրիւշ շուն շան կըլի պերնի փայ չընիր. կէս խնձա կին կէսն էլ Տրօշակին. աշխար ալամ կիտի որ խնձակ մեր Զէթոն աղսաեց կէօ մըկա էլ էնտեղ խայ իշխանի նստի, արօշակն էլ ծօ կէօ մերայ վանայ մէջ տաս խաղար մարդ մեռցուց, խոր խինկն մեր անէն են, խոնց տըհա չըհատ, սպաթ լաղըմի. էտա կաշե րաց, էտա մե աղատող թօտուններաց չէօրէօսկէնք փարէք ետ՝ վարդապե տի՛ն տանք. սուրբ քեղարդ կիտի գըլօխ մաղեց, խելքըս ծաւրիցի էտա ձեր խօսկին որ ասիրիք «պօղեր ու ղարկվեց երկինք պալօյով» . վայ ես քո ուղարկին էլ քո պալօյին էլ մեղայ մեղայ պիտի ասի երկնույն էլ. նայսա չիւքիւր որ խասկցայ թէ տիւք էլ Փըռըլախ մարեր էք. ձե ի նշ ասեմ ես իմ գըլօխ տըբելու եմ որ իմ ձեռնով իմ տուն աւիրեցի: Մըկա կէօղիւմ խաթրով էտա փարէն զուր տըսնըխինկ օր ինոնց ձեռ խասնեղուի եօխսա արուն կ'ենի, զաթի ես էսօր ինոնց թէլկրաֆն արի՝ չէօրէօսկէք իսա տըսնըլեցընճի օր ձեր գըլօխ ձեր կտակով կտակով մէյաեղ տաղալնի, կիտէք որ խոնք կօճապաշի չեն, կօ միթէպաշի են քեաշածն կը մըլեն, ի՛նչիսա կէօ ձե մէօհլաթ «արուն ձեր ի գըլօխ ձեր լինիսցի» ըսկից սօբա տիւք գիտնալու էք: Դարձեալ ձե խոնար:

Րէն վարդանի լաճ

ՄԸԿՈ

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅՄԵՐ

Առ Ազգանուէրն Օրիորդ Մ

Երէկը չէ, առջի օրն էր,
Երբ մութն աշխարհ դեռ կը ծածկէր,
Աստղերն ամեն ի միասին
Ժողոված մի մեծ խորհուրդ ըբինք:
Մէկն հարցուց թէ «ո՞ւր է լուսին,
Արծաթագեղ մեր թագուհին,
Դեռ չէրեւցաւ գիշերին զարդ,
Երկնից խորան ննաց անղարդ:»
Ուրիշ մ'ըսաւ, «հինգշաբթի էր,
Վառ վառ գլուխն սատարիկ ցաւէր,
Արծաթ մաղերն գեղեցկադին
Դեռ չէր սանաթած սէրն երկնքին»
Այնպէս լքեալ ցիր ցան եղած,
Ամպոց վրայ տեսայ պառկած:»
Այս որ ամենքը լսեցին,
Երեսներուն սեւ ծածկեցին,
Անոնց մէջէն թառ Աստղիկ
Հիբոկրատին վազեց բողբոլ,
Ձեռքն համբուրեց ի ծունր իջաւ
Շատ աղաչեց, ու շատ լացաւ,
«Եկուր» ըսաւ, «Հայոց լուսնակ
Հոգեվարքի մէջ է հիմակ,
Թէ չհասնիս, կր մեռնի նա
Ալ ո՞վ մեզի լուսնակ ըլլայ:»
Ես Աստուծոյն ունիմ պառգամ,
Որ լուսնակին նոր կեանք մը տամ,
Դարձիր, գնա, բա՛ն չլան
Թող զարգարեն հայոց խորան
Շատ չտեւեր, լուսնակն անկէ
Շքեղափայլ պիտի ծաղէ,
«Եւ ի՞նչ ընենք մինչեւ յայնժամ,
Մութ կը պատէ մեզ ժամէ ժամ:»
Ըսաւ Աստղիկ, դարձեալ լացաւ
Աչքին ցօղեր ծովեր լեցաւ:
Միւրա շարժեցաւ Հիբոկրատին
Ու լսուեցաւ ձայն Քերոբին,
Ըսաւ Աստղիկ զարձ ի կայան
Ինձ աչս է կամբը Աստուածեան
—Մինչեւ յայնժամ լուսնակին տեղ
Օրիորդ Մ փայլի չքեղ:—

Отговорникъ: П. Глушковъ.

Печатница К. Николовъ.—Варна.